

պսակեաց Տէր վարդապետ, գերընտիր Հայրս մեր վերոգրեալ<sup>1</sup> :

Եւ զի թէպէտ գոն յայսմ տիրախնամ քաղաքին այլ վանորայք չքնաղք եւ եկեղեցիք

1 Ամրտու, զոր վերաշինեց վարդան վրդ. 1697ին, իր վարդանաշէն գեղեցկութենէն Տաճարը միայն կը պահէ, որ իրաւի ամուր շինուածք մ'է. այն կողմերուն համար սովորականէն բարձր ամառ մը, որուն քնասուած կաթողիկէն կը բարձրանայ սիւներու վրայ .

Բոխոփե Բնախարանէրը, որ միաբանութեան համար շինուած էին, հիմայ խրթնացած եւ լքուած են: Առաջնորդի համար ամենէն յարմար վանքն է, բայց հեռի կ'իյնայ կենդրոնէն:

Այն «պէսպէս մատենիւք» ճոխ մատենադարանը, ամառին հիւսիսային կողմը, Աւանդատան մէջ եւ Աւանդատան Արեւմտեան կողմը ամուր պահարանի մէջ ամփոփուած եւ երկար ատեն անմատչելի մնացած է բանասէր այցելուներու: Նախան կ'ըսէ թէ կոչուտ այն գրքերուն շատերը Պոլիս բերել տուաւ եւ ընդօրինակել տալէ ետքը՝ նորէն զրկեց Ամրտու: Այս ընդօրինակութիւնը իր «գասատան» համար էր անշուշտ: «Սա (Բաղէշ) ունէր չորս հոյսկապ վանք, եւ գլխաւորն էր Ամրտու: Սուրբ Յովհաննու կարպետի վանքն, յորմէ Բողբոջեան երանելի նախնիք մեր: Աստի էր երանելի Բարսեղ վարդապետն. որ է լոյս եռօ շարճեօք իրախանութեան: Ունէր եւ գրտաւն մ լի մօնայն գրեմքս ասորաւթանախանօք եւ գիլիստօյախանօք. յորմէ զման եքիւր մեր լոսահագի Յոհաննէս կուտ վարդապետն եւ Գողմարեալ յղեաց անոր» (Գանձարան հատոր Գ. էջ 272, հմմտ. վերագոյն էջ 51):

Սրուանձտեանց կը գրէր 1874ին, «Ահա՛ գրանոց մի յԱմրտու վանս ի Բաղէշ, ուր հարուստ թուով ձեռագիրք գտանին, որպէս պատմէ համբաւն. բայց արգիլեալ փակեալ մնան ի գէճ խշտիս ընդ քարուկրաւ, զորոյ գրան փականաց բանալին ունի ասեն, որ երեսփոխանն ընտրի եկեղեցւոյն. ոմանք ի բանասիրաց, եւ յառաջնորդացն անգամ կ'ամեցեալ են տեսանել, այլ չէ լեալ հնար. սակայն լուսայ ի յետին աւուրս, զի ցանկ նոցուն գրեցին եւ պահին յԱռաջնորդարանի», (Հնոց եւ Նորոց էջ 26—27): Ես բախտ ունեցայ ո՛չ միայն մտնելու այդ քարուկրանկուղին մէջ, այլ նաեւ բոլոր